

ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ՑՈՒՑԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Ե. Լ. ԵՐՋԵՆՅԱՆ, Ս. Ա. ՉԱԼԱԲՅԱՆ

Ինչպես հայտնի է, բառերն իրենց իմաստով, նշանակությամբ և գործառության ոլորտով բաժանվում են երկու խմբի՝ անվանողական և ցուցական բառերի։ Դեռ հին հույն քերականագետները, մասնավորապես Դիոնիսիոս Թրակացին, առանձնացնում էին առարկան անվանող և նրա որակական առանձնահատկությունները տարբերակող բառերը (պոյոտոս) առարկան, մարդկանց, երևույթները մատնանշող, ցույց տվող բառերից (դեյեկատիկոս)։

Դեյեքսիսի (ցուցականություն) երևույթը լեզվաբանության մեջ առաջին անգամ սխտեմավորված ներկայացվել է Կ. Բյուլերի կողմից 1934 թ. իր «Լեզվի տեսություն» գրքում¹, որն այժմ համարվում է ցուցականության երկվյթի ուսումնասիրության դասական աշխատություններից մեկը։ Կ. Բյուլերի տեսության համաձայն, ցուցական բառերը, ի տարբերություն անվանողական բառերի, չտալով մարդկանց, առարկաների անվանումներ, տարբերակում են փաստերը, երևույթները, առարկաները, ելնելով հաղորդակցման կողմնորոշիչներից (կոորդինատներից)՝ խոսող և լսող, տեղ և մամանակ, որոնք առանձնացնում են դեյեքսիսի երեք կարգեր՝ անձի (Ich—denn Deixis), տեղի (hier—dort Deixis) և ժամանակի (jetzt—dann Deixis) կարգերը։

Ինչպես հայտնի է, անձի կարգը ցուցականության հիմնական կարգն է, որի կենտրոնում կանգնած է խոսողը։ Գուցե հենց այդ պատճառով էլ դեյեքսիսի առաջին ուսումնասիրողները ցուցականության կարգի ուսումնասիրությունը հանգեցրել են անձնական և ցուցական դերանունների իմաստային առանձնահատկությունների բացահայտմանը։ Հետագայում դեյեքսիս հասկացությունը գնալով ավելի է զարգացել տարածվելով այլ խոսքի մասերի վրա, որոնց պատկանող լեզվական միավորները դերանունների նման մատնանշում, ցույց են տալիս այդ առարկաները՝ ելնելով տվյալ խոսքի պահի իրադրությունից։ Եթե վերոհիշյալ լեզվաբանները ուսումնասիրել են ցուցականությունը միայն դերանունների հետ կապված, ապա Կ. Բյուլերը զբաղվել է նաև ցուցական բնույթ ունեցող մակբայներով և կապերով։ Հետագայում Ա. Ի. Սմիրնիցկին ուսումնասիրել է ցուցականության երևույթը բայ խոսքի մասի հետ կապված՝ անվանելով դա «բայերի դերանվանականություն» (местоименность глаголов)²։

Վերջին ժամանակներս լեզվաբանության մեջ սկսել են երևան գալ աշխատանքներ, որոնք վերաբերում են այլ խոսքի մասերում (մակբայ, ածական, բայ, գոյական) ցուցականության երևույթի ուսումնասիրությանը։ Ընդ որում դեյեքսիսի այսպիսի բազմակողմանի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս ոչ միայն ավելի խորը հետազոտել այդ երևույթը՝ օգտագործելով լեզվական գրեթե ամբողջ բառապաշարը, այլև բացահայտել և համեմատել տարբեր խոսքի մասերի ցուցականության աստիճանը³։

¹ K. Bühler. Sprachtheorie: Die Darstellungsfunktion der Sprache. Jena, 1934.

² А. И. Смирницкий. Об особенностях обозначения направления движения в отдельных языках.—Иностранные языки в школе, 1953, № 2.

³ Տե՛ս Ե. Լ. Երջենյան. Дейктическая семантика слова. Ереван, 1988.

Դեյքսիսը լեզվական ընդհանրությամբ է, քանի որ հաղորդակցման հիմնական բաղադրիչները (խոսող, լսող, հաղորդակցման տեղ և ժամանակ), որոնք ցույց է տալիս, մատնանշում է դեյքսիսը, պարտադիր և անհրաժեշտ են ցանկացած լեզվով հաղորդակցումը իրականացնելու համար: Հոգվածում ուսումնասիրվում է ժամանակային դեյքսիսը, որը ի հայտ է գալիս ժամանակային հաղորդականության եռանդամ հակադրության միջոցով՝ նախորդություն-միաժամանակություն-հաջորդություն:

Ժամանակային ցուցականության դաշտի մեջ ընկնող լեզվական միավորներն առանձնանում են մեկ ընդհանուր իմաստային բաղադրիչի օգնությամբ, որն իրենից ներկայացնում է հաշվարկման կետի նկատմամբ ունեցած ժամանակային վերաբերություն:

Կ. Ուլերի կարծիքով հաշվարկման կետ է դառնում ցուցման կենտրոնը (origo), որը «ևս-այստեղ-հիմա» բաղադրիչների միասնությունն է: Սակայն Կ. Ուլերի առաջարկած սխեմայում նկարագրված է ցուցականություն միայն մեկ դեպք: Անհրաժեշտ է նշել, որ հաշվարկման կետի նման «նեղ» մեկնարանմանը զուգահեռ գոյություն ունի նաև «լայն» մեկնաբանում, երբ ցուցման համար հաշվարկման կետ կարող է հանդիսանալ օբյեկտի իրականության ցանկացած երևույթ, առարկա, դեպք: Ժամանակային դեյքսիսը հոգվածում բնութագրվում է որպես ժամանակային առանցքի վրա որեւէ հաշվարկման կետի նկատմամբ ունեցած մոտիկության հեռավորության ցուցում:

Ընդգծենք, որ հայերենին նվիրված լեզվաբանական գրականության մեջ ցուցականություն հասկացությունը նշվել է միայն անձնական և ցուցական դերանունների հետ կապված⁴, ժամանակի մակբայների առնչությամբ⁵:

Գ. Ռ. Զահուկյանը բայի խոնարհման և անվան հոլովման համակարգերի բերականական իմաստները համեմատելիս գրում է. «Անվան առկայացման կարգի (լայն առումով) զրսևորումներից մեկը՝ հիմորոշությունը, ինչպես տեսանք, դուռահեռ ունի բայական դեմքի մեջ, երկրորդը՝ որոշյալությունը՝ եղանակի կարգի մեջ, որպես հաղորդողի սուբյեկտիվ վերաբերմունքի զրսևորում, երրորդը՝ ցուցականությունը՝ ժամանակի կարգի մեջ, որպես հաղորդակցման իրադրության որոշում ըստ տեղի և ժամանակի»⁶:

Սակայն նշենք, որ ժամանակային ցուցականությունը հայերենում առանձնակի ուսումնասիրություն առարկա չի եղել:

Մենք փորձել ենք, թե անգլերենի հետ համադրելով, բացահայտել հայերենում տարբեր խոսքի մասերում ժամանակային ցուցականության արտահայտման միջոցներն ու առանձնահատկությունները:

Հիմնվելով ցուցականության տեսություն հաշվարկման կետի «լայն» մեկնարանման վրա՝ առանձնացրել ենք տարբեր խոսքի մասերին սլատկանող շուրջ 800 բառ (մակբայ՝ այժմ, անմիջապես, առաջ, արդեն, դեռ, իսկույն, հետո, հիմա, շուտով և այլն, ածական՝ անժամ, անցյալ, առաջիկա, գալիք, ընթացիկ, լինելի, հեռու, հետին, մոտիկ և այլն, բայ՝ գուշակել, թողնել, ժառանգել, կանխել, համատեղել, հետաձգել, նախազգալ, որոշել, ուշանալ

⁴ Հ. Աճառյան. Կիսկատար բերականություն հայոց լեզվի. հ. 2, Երևան, 1954, էջ 51:

⁵ Ս. Գ. Արրահամյան, Ն. Ա. Պառնասյան, Հ. Ա. Օհանյան. Ժամանակակից հայոց լեզու. հ. 2, Երևան, 1974, էջ 453:

⁶ Գ. Ռ. Զահուկյան. Ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ. Երևան, 1974, էջ 241:

⁷ С. А. Чалаян. Особенности проявления временного дейксиса в армянском и английском языках.—Иностранные языки, зарубежная литература. Вып. 6. Ереван, 1986; С. А. Чалаян, Е. Л. Еремикин. Сопоставительный анализ темпоральных действительных систем в английском и армянском языках.—Иностранные языки, зарубежная литература. Вып. 8. Ереван, 1988.

և այլն, գոյական՝ ամանոր, ամսավերջ, անելիք, ետնակ, երգակից, կանխագին, հետնորդ, նախագեղ, նուբար, տարկետում և այլն), որոնք իրենց իմաստային կառուցվածքում պարունակում են ժամանակային ցուցում:

Ժամանակային ցուցում արտահայտող բառերը կոչմանորոշում են դեպքերն ու իրադարձությունները ժամանակային առանցքի վրա, որտեղ հաշվարկման կենտրոնը «ներկա»-ն է, որն իր հերթին մի սահմանագիծ է անցյալի և ապագայի միջև: «ներկա» (հիմա/այժմ) ասելով, կարող ենք տարբեր երկարության ժամանակահատվածներ հասկանալ, սկսած պահից, վերջացրած անվերջությամբ: Դա մի փոփոխուն մեծություն է, որը կախված է խոսողի տեսանկյունից:

Հոգովածի նպատակն է բացահայտել հայերենի ժամանակային ցուցման դաշտի միջուկը կազմող ԱՅԺՄ և ՀԻՄԱ մակբայների իմաստային առանձնահատկությունները, ուսումնասիրել նրանց օգտագործումը նախադասության մեջ:

Հայտնի է, որ լեզուներում շատ սակավ են լինում բացարձակ հոմանիշներ: Անգամ նման դեպքերում անկասկած գոյություն ունի որևէ տարբերակող հատկանիշ, որը զժվար բնկալելի է: Այդ իսկ պատճառով առաջին հայացքից բացարձակ հոմանիշ թվացող ԱՅԺՄ և ՀԻՄԱ մակբայների առանձնահատկությունները բացահայտելու համար, դենք դրանք գիտափորձի սահմանափակ պայմանների մեջ՝ ստիպելով, որ իրենք բացահայտեն իրենց իմաստային «գաղտնիքները»:

Վերոհիշյալ մակբայների ուսումնասիրությունը կատարվում է համաձայն հետևյալ սկզբնադրույթների.

1. Բառիմաստի ուսումնասիրությունը կատարվում է լեզվի հետազոտիչ լեզվաբանական մոտեցման հիման վրա: Որպես հիմք ընդունվում են է. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանից» (Երևան, 1976) վերցրած բառահոգվածները:

2. ԱՅԺՄ-ն ու ՀԻՄԱ-ն դիտվում են որպես յուրաքանչյուրը երեքական իմաստ ունեցող բաղմիմաստ բառեր, սակայն այս աշխատանքում ուսումնասիրվում են միայն նրանց ցուցում պարունակող առաջին երկու իմաստները (ԱՅԺՄ₁, ԱՅԺՄ₂, ՀԻՄԱ₁, ՀԻՄԱ₂): Քննության շնչ առնվում նրանց երրորդ՝ եզրակացություն, ամփոփում արտահայտող իմաստները (ԱՅԺՄ₃, Դե, հիմա, արդ, այս բոլորից հետո՝ իբրև եզրակացություն, ՀԻՄԱ₃, Արդ, ուրեմն, վերջապես, հետևաբար):

3. ԱՅԺՄ և ՀԻՄԱ մակբայների օգտագործումը նախադասության մեջ էապես կախված է ստորոգյալի եղանակաժամանակային ձևից: Հետևաբար այդ մակբայների կիրառման օրինաչափություններն ի հայտ բերելու համար անհրաժեշտ է ստորոգյալը փոփոխել համաձայն հայերենի քերականական եղանակների (սահմանական, հրամայական, ըզձական, ենթադրական, հարկադրական) և ժամանակային ձևերի:

4. Ուսումնասիրվող մակբայների իմաստային առանձնահատկությունների բացահայտումը տվյալ աշխատանքում կատարվում է գիտափորձի⁸ միջոցով: Վերջինիս կիրառումը իմաստաբանության մեջ ապահովում է ստացվելիք տվյալների ճշգրտությունը, որն առանձնակի կարևորություն է ներկայացնում հոմանիշների ուսումնասիրության մեջ, բացահայտում է յուրաքանչյուրի օգտագործման առանձնահատկությունները՝ կախված տվյալ խոսքաշարի հարաչափումներից (պարամետրերից): Լեզվաբանական գիտափորձի ժամանակ պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ այստեղ ուսումնասիրության օբյեկտ է դառնում մարդը՝ լեզու կրողը: Սակայն դա երբեք չի նշանակում, թե ստացված արդյունքները զուտ սուբյեկտիվ են:

⁸ Իմաստաբանության մեջ գիտափորձի անցկացման ընթացքի և սկզբունքների մասին տե՛ս Օ. Ն. Селиверстова, Օ. А. Сулейманова. Эксперимент в семантике.— Изв. АН СССР, Серия литературы и языка, т. 47, 1988, № 5, с. 431—443.

Հայտնի է, որ լեզվական միավորների արտասանությունն ու օգտագործումը կամայական չեն, կախված են որոշակի ընդհանուր օրենքներից և ոչ թե խոսողից: Դրա հետ մեկտեղ բոլոր իրազեկիչների (ինֆորմանտների) գրեթե հաստատանքները միշտ չէ, որ համընկնում են: Դեհատակահերթի միմյանցից տարբերվելը կարող է և՛ շատ կարևոր, և՛ շատ պատահական լինել: Պատահական գնահատականները լեզվաբանը կարող է անտեսել, առանձնացնել հիմնականից ու կարևորից՝ ելնելով մաթեմատիկական վիճակագրության բանաձևերից: Պատահական գնահատականները կարող են պայմանավորված լինել հոգեբանական գործոններով, միևնույն լեզվով խոսողների անհատական նշակարգերով (կոդերով): Սակայն անհրաժեշտ է նշել, որ նման տեսության դեպքում գնահատականների տարբեր լինելը սովորաբար գտնվում է պատահականությունների մաթեմատիկորեն որոշվող միջակայքում: Ավելին, ճիշտ գիտական վարկածի դեպքում այդ տարբերությունները չպետք է մեծ լինեն:

Դիտափորձում կիրառվող մաթեմատիկական միջամտությունը կատարվում է հետևյալ ձևով. «X» թվով իրադեկիչներին առաջարկվում է «Y» թվով ասուլիքներ: Յուրաքանչյուր տեսողական բաղկացած է չորս նախադասությունից, որոնց մեջ բաց թողած տեղերը, այնտեղ, բրտեղ անհրաժեշտ է, պետք է լրացնել ՀԻՄԱ կամ ԱՅԺՄ մակբայներով: Արդյունքը, որն իրենից ներկայացնում է լրացված իրադեկիչների կողմից մակբայների օգտագործման հաճախականությունը, գնահատվում է 4-բալային համակարգով: Մաթեմատիկական բանաձևերի⁹ միջոցով հաշվարկվում են միջին գնահատականը, միջին գնահատականի դիսպրիան (միջին գնահատականի համեմատությամբ եղած նշանակությունների շեղումն է, որի փոքր լինելու դեպքում գնահատականներն ավելի հավաստի են դառնում), կշռված միջին գնահատականը և կշռված միջին գնահատականի դիսպրիան (որոնք ավելի ճշգրիտ են դարձնում ստացվող պատասխանները):

Անցնենք ուսումնասիրվող բառերի բառարանային բացատրությունների նկարագրմանն ու համեմատմանը:

ՀԻՄԱ մկ. 1. Այժմ, ներկայումս, այս պահին 2. Անմիջապես, շուտով՝ իսկույն 3.

ԱՅԺՄ մկ. 1. Այս ժամին, հիմա 2. Ներկա ժամանակաշրջանում, ներկայումս 3. ...

Վերը նշված բառարանային բացատրություններն ուսումնասիրելիս կա-
րելի է առանձնացնել հետևյալ իմաստային բաղադրիչները.

«պահ» — փոքրագույն ժամանակամիջոց, ժամանակակետ,

«խոսելու պահ» — այն պահը, որի ընթացքում տեղի է ունենում խոսքը,

«փոքր ժամանակահատված»,

«մեծ ժամանակահատված»,

«միաժամանակություն»,

«խոսելու պահից հետո» (հաջորդություն)

Այսպես, ՀԻՄԱ-ում կա ցուցում թե՛ խոսելու պահի (այս պահին), թե՛ խոսելու պահն ընդգրկող ժամանակահատվածի (ներկայումս) նկատմամբ:

ԱՅԺՄ-ում ժամանակային ցուցումն ընդգրկում է ավելի մեծ ժամանակամիջոց, քան խոսելու պահը (այս ժամին), որը կարող է հաջորդաբար հարյուրավոր պահեր պարունակել: Այսպիսով, ՀԻՄԱ-ում գոյություն ունի ցուցում ժամանակակետի, ժամանակահատվածի, ԱՅԺՄ-ում՝ միայն ժամանակահատվածի նկատմամբ:

ԱՅԺՄ-ում նույնպես ցուցում է արտահայտված ժամանակահատվածի նկատմամբ (ներկա ժամանակաշրջանում, ներկայումս), սակայն այս դեպքում կարելի է խոսել ավելի «լայն» ներկայի մասին՝ տարբերակելով մեծ և փոքր ժամանակահատվածների միջև:

⁹ Տե՛ս И. Н. Бронштейн, К. А. Семедяев. Справочник по математике для инженеров и учащихся втузов. М., 1981.

Ինչ պերաբերում է ՀԻՄԱՀ-ին, նրա իմաստային կառուցվածքն արտահայտում է մոտալուտ ապառնիության, խոսելու պահին անմիջապես հաջորդելու ժամանակային ցուցում (անմիջապես, շուտով, իսկույն)։

Հետևաբար, կարելի է նշել, որ նրանց միջև ընդհանուր իմաստային նմանությունների հետ զուգահեռ (ուսումնասիրվող երկու մակբայների իմաստային կառուցվածքում կան ինչպես ցուցում (այս), այնպես էլ ժամանակ (պահ, ժամ) արտահայտող իմաստային բաղադրիչներ) կան նաև միմյանցից տարբերվող ուրույն իմաստային երանգներ, որոնք պայմանավորված են «ցուցում» և «ժամանակ» բաղադրիչների փոխհարաբերությամբ¹⁰։

Այսպիսով, գիտափորձի անցկացման համար, հիմնվելով տեքստային նյութի վրա, կազմվեցին չորսական նախադասություններ պարունակող զանազան տեսակներ, որոնց նպատակն էր ուսումնասիրել ԱՅԺՄ և ՀԻՄԱ մակբայների կիրառությունը տարբեր խոսքաշարերում, ինչպես նաև նախադասության մեջ տարբեր ժամանակներով և եղանակներով արտահայտված ստորոգյալների դեպքում։

Տեսուերը առաջարկվեցին 11 իրազեկիչների¹¹, որոնք նախադասություններում բաց թողնված տեղերը պետք է լրացնեին ԱՅԺՄ կամ ՀԻՄԱ մակբայներով։

Հետևյալ օրինակներում «խոսելու պահ» իմաստային բաղադրիչի անհրաժեշտությունը պայմանավորված է բայի իմաստով (պարապում է, դրտնում է 1,2) «հեռախոսային խոսակցության» մեկնաբանմամբ, որը տեղի է ունենում խոսողի և լսողի համար միևնույն ժամանակամիջոցում (3) և ժամանակի ընդգծմամբ (ժամը ութն է 4)։

1. Աշոտին մի խանդարիր, նա ... պարապում է։
2. Որտե՞ղ է Աննան ... գտնվում։
3. Ի՞նչ ես ... անում (հեռախոսային խոսակցություն)։
4. Ո՞ր կարող ենք զնալ... արդեն ժամը ութն է։

Այստեղ ԱՅԺՄ և ՀԻՄԱ մակբայների կիրառության միջին գնահատականն է՝ ԱՅԺՄ=1,364, ՀԻՄԱ=2,636, որից հետևում է, որ խոսքաշարում «խոսելու պահ» իմաստային բաղադրիչի առկայության դեպքում ավելի հաճախ (գրեթե երկու անգամ) օգտագործվում է ՀԻՄԱ մակբայը։

Դիտենք հետևյալ օրինակները.

5. ... նա սովորում է Մոսկվայում։
6. ...ամբողջ աշխարհն զիտե շրջափակման մասին։
7. Որտե՞ղ է Աննան ... (աշխատում, ապրում)։
8. ... ուղիղ արժեզրկման պատճառով ապրանքների գները զնալով բարձրանում են։

Օրինակների այս խմբում առկա է «խոսելու պահ» ընդգրկող ժամանակահատված» բաղադրիչի անհրաժեշտությունը, որը բացակայելով բառարան-

¹⁰ Հմմտ. ՀԻՄԱ մակբայը ունի օգտագործման անհամեմատ ավելի մեծ հաճախականություն ԱՅԺՄ մակբայի հետ համեմատած՝ ԱՅԺՄ—1262/70, ՀԻՄԱ՝ 2801/72, որտեղ համարիչը արտահայտում է բառի ընդհանուր հաճախականությունը, հայտարարը՝ տարածվածությունն ըստ տեքստերի (Բ. Կ. Ղ ա գ ա ղ ա ն. Ժամանակակից հայերեն լեզվի հաճախականության բառարան. Երևան, 1982)։

¹¹ Լեզվաբանական գիտափորձում ընտրանքը կարող է կազմված լինել 25—40 դեպքերից (տե՛ս Օ. Խ. Շեկոբերստա. Указ. соч., с. 413)։ Ներկա հոդվածում ընտրանքը կազմված է 44 դեպքերից, որն, անկասկած, զերազանցում է լեզվաբանական տեսության մեջ առաջադրված պահանջներին։

Իրադեկիչները ԵՊՀ-ի անգլերեն լեզվի, ԵրԺՏԻ-ի օտար լեզվի ամբիոնների դասախոսներ էին և բանասիրական (ԵՊՀ), աշխատանքի Լկոնոմիկայի (ԵրԺՏԻ) ֆակուլտետների բարձր կուրսեցիներ։ Հեղինակները հայանում են իրենց խորին շնորհակալությունը լեզվաբանական գիտափորձի մասնակիցներին։

նային բացատրությունների մեջ, ի հայտ է գալիս միայն խոսքում և պատմանափոխած է յուրաքանչյուր նախադասության խոսքաշարով և գլխավորապես բայի իմաստով: Այս դեպքում միջին գնահատականները հետևյալն են՝ ԱՅԺՄ=3, ՀԻՄԱ=1:

Վիճակագրական տվյալներից ջայտուն երևում է, որ ԱՅԺՄ մակբայը շատ ավելի հաճախ է օգտագործվում խոսելու պահին ընդդեմ ժամանակահատվածն արտահայտելու համար: Համեմատենք (3) և (7) նախադասությունները, որոնք ըստ իրադեպիչների գերակշռող մեծամասնության կարծիքի պետք է յուրացվեն հետևյալ ձևով.

3. Որտե՞ղ է Աննան իմա (գտնվում):

7. Որտե՞ղ է Աննան այժմ (աշխատում, ապրում):

«Որտե՞ղ է Աննան իմա» հարցը նշանակում է, թե՛ որտե՞ղ է Աննան հենց ճիմա, երբ տրվում է այս հարցը (խանութում, առանք, կողքի սենյակում), այսինքն խոսելու պահին: Մինչդեռ «Որտե՞ղ է Աննան այժմ» — ենթադրում է, թե որտեղ է Աննան ապրում, աշխատում այժմ: (Հմտ. հետևյալ հակադրությունը. նա չեմ կարող Աննայից կանչել, *նա այժմ համալսարանում է (հեռախոսային խոսակցություն): Հայերեն անկասկած ավելի ճիշտ կլինի ասել՝ նա չեմ կարող Աննային կանչել, նա իմա համալսարանում է):

Վիճակագրական տվյալները մեկ անգամ ես վկայում են այն մասին, որ «խոսելու պահին» հեռավոր կապվում է ՀԻՄԱ մակբայը: Անհրաժեշտ է նշել, որ այստեղ խոսքը գնում է միայն ՀԻՄԱ-ի մասին: ԱՅԺՄ-ի սակավ օգտագործումը (1—4) դեպքում և անհամեմատ հաճախ օգտագործումը (5—8) — ում խոսում է այն մասին, որ ԱՅԺՄ-ը ավելի շատ զուգորդվում է ժամանակահատվածի գաղափարի, բան՝ ժամանակակետի, խոսելու պահին հետ:

Իհարկե, այստեղ չի կարելի անտեսել նաև այն հանցամանքը, որ ԱՅԺՄ/ՀԻՄԱ մակբայների օգտագործումը կախված է բայի իմաստային առանձնահատկություններից, խոսքաշարից՝ նախադասության անդամների բառիմաստից և, անկասկած, բայի եղանակաժամանակային ձևերից:

Թևե բացատրական բառարանը չի նշում ուսումնասիրվող մակբայների օգտագործման դեպքերը որևէ պահի, ժամանակի նկատմամբ, գրականության մեջ, բանավոր խոսքում ԱՅԺՄ-ն ու ՀԻՄԱ-ն շատ հաճախ օգտագործվում են անցյալ ժամանակաձևերի հետ¹²:

Իրադեպիչներին տրվեցին մեծ մասամբ գրականությունից վերցրած օրինակներ, որտեղ ԱՅԺՄ/ՀԻՄԱ մակբայների օգտագործումը զուգորդվում էր նախադասություններում սահմանական եղանակի անցյալ անկատար, անցյալ կատարյալ, ներկա վաղակատար, անցյալ վաղակատար ժամանակային ձևերով դրված ստորոգյալների օգտագործմամբ:

Մինչև նյութի անմիջական նկարագրությանն անցնելը, անհրաժեշտ ենք գտնում անդրադառնալ Հ. Ռեյխենբախի առաջարկած ժամանակային հաշվարկման կետի գաղափարին, որը կիրառվում է տվյալ աշխատանքում ԱՅԺՄ/ՀԻՄԱ մակբայների անցյալ ժամանակաձևերի հետ օգտագործումը բացատրելիս:

Հ. Ռեյխենբախը¹³ ժամանակային դեյքսիսը բնութագրում է երեք հասկացությունների միջոցով՝ հաղորդակցման ժամանակ (speech time), նկատ-

¹² Հմտ. ԱՅԺՄ/ՀԻՄԱ մակբայների համապատասխան բառային համարժեքների բառարանային բացատրություններում (անգլերեն՝ now—A. S. Hornby. Oxford Advanced-Learners' Dictionary of Current English. London, 1974, *ռուսերեն՝ сейчас/теперь—С. И. Ожегов. Словарь русского языка. М., 1987*) նշվում է նրանց օգտագործումը անցյալ ժամանակային ձևերի հետ: Այդ երևույթը անգլերենում ուղղելի է «narrative meaning» տեսերենում՝ «нарративный режим, режим повествовательного текста» անվանումներով:

¹³ H. Reichenbach. Elements of symbolic logic. New York, 1947.

րադրվող իրադրության ժամանակ (event time) և ժամանակային հաշվարկման կետ (reference time): «Տղան դիրք է կարգում» նախադասության մեջ բոլոր երեք ժամանակային կետերն էլ համընկնում են: «Տղան գիրք էր կարդում» — այստեղ ժամանակային հաշվարկման կետը համընկնում է հաղորդակցման պահի հետ՝ մինչդեռ նկարագրվող իրադրության ժամանակը նախորդում է հաղորդակցման պահին: Իսկ «Երբ ես եկա, տղան արդեն կարդացել էր գիրքը» — բոլոր երեք կետերը այստեղ տարբեր են: Նկարագրվող իրադրության ժամանակը (գիրք կարդալը) նախորդում է հաշվարկման կետին (իմ գալու ժամանակին), իսկ վերջինս (հաշվարկման կետը) նախորդում է հաղորդակցման պահին:

Պիտենք իրազեկիչներին առաջադրված հետևյալ օրինակները, որոնք ընդգրկում են սահմանական եղանակի բոլոր ժամանակները:

Անցյալ անկատար

9 Առաջ էլ էր եղել այստեղ, բայց այն ժամանակ ամայի էր այդ ափը, իսկ ... ավան լր երևում:

10 Ավելի համարձակներն ու ավելի խելացիները (շները) հեռացան մարդու վառած խարուկներից, որոնց մոտ ... սպանդ էր տեղի ունենում:

11 Ամբողջ ոհմակի կովարարին ու առաջընթացիկին ասում և հետապնդում էին ... բոլոր ջները:

12 Սեփականություն ... նա ամեն ինչ այլ կերպ էր տեսնում:

Անցյալ կատարյալ

13 Բայց ... նույն մարդը օգնեց նրան զնահատելու իր մեջ կատարված փոփոխությունները:

14 Իսկ ... դիտեր, դրա մեջ մի քանի տողի ազատ տեղ էր մնացել, իր թաղման թվականի և տապանազրի համար:

15 ... ավարած խսիրն բազկաթռուի մեջ, նազարեթը հիշեց:

16 Նրան երբեք չէի համակրում, բայց ... ուզեցի հանդիպել և խոսել:

Ներկա վաղակատար

17 ... եմ հասկացել, թե ինչ է պատահել:

18 Աշխատանքս ... մի կողմ եմ դրել:

19 Նա ... հեռացել է քաղաքական կյանքից:

20 Լավ է, որ դոնե ... հիշել են իրենց երեխային:

Անցյալ վաղակատար

21 Խոշոր էր մոծակը, հավանորեն ամբողջ ձմեռն անց էր կացրել մի շոր փշակում, իսկ ... արևը դուրս էր հանել նրան ընդարձացումից:

22 Նա զգում էր, որ ... մոտեցել էր անդնդի եզրին:

23 Հասկանում էր, որ ... կորցրել էր ամեն ինչ:

24 Նա լրիվ մոռացել էր իր մայրենի լեզուն:

Վիճակագրական տվյալների համաձայն սահմանական եղանակի անցյալ ժամանակների հետ ԱՅԺՄ/ՀԻՄԱ մակբայների օգտագործման կշռված միջին գնահատականները հետևյալն են՝

այժմ = 2,274, ճիմա = 1,386, որոնց հնարավոր դիսպերսիաներն են՝

այժմ = 0,308, ճիմա = 0,467:

Ակնհայտ է, որ ուսումնասիրվող մակբայները կարող են ազատ օգտագործվել անցյալ ժամանակով դրված ստորոգյալների հետ, ցույց տալով որոշակի ժամանակային հարաբերություններ:

ծթի ելնենք Ռեյսենբախի ժամանակային երեք հասկացություններից (speech time, event time, reference time), ապա 9, 10, 16, 21, 22, 23 օրինակներում նկարագրվող իրադրության ժամանակը նախորդում է հաշվարկման կետի ժամանակին, որն իր հերթին նախորդում է հաղորդակցման պահին (վերջինս բնական է, քանի որ ստորոգյալները դրված են անցյալ ժամանակով)։ Իսկ 11, 12, 13, 14, 15, 17, 18, 19, 20, 24 նախադասություններում հաշվարկման կետը համընկնում է հաղորդակցման պահի հետ, մինչդեռ նկարագրվող իրադրության ժամանակը նախորդում է երկուսին էլ։ Ինչպես տեսնում ենք, «խոսելու պահ», «խոսելու պահն ընդգրկող ժամանակամիջոց» իմաստային բաղադրիչ ունեցող ԱՅԺՄ, ՀԻՄԱ (խոսքը գնում է միայն ՀԻՄԱ-ի մասին) մակբայները անցյալ ժամանակային ձևերի հետ օգտագործվելիս կարող են վերաիմաստավորվել ցույց տալով միայն ժամանակահատված անցյալում։ Հավանաբար կարելի է ենթադրել, որ այստեղ ժամանակակետ-ժամանակահատված հակադրությունը չեզոքանում է։ Այսինքն մի կողմից անցյալ ժամանակային ձևերի հետ Այժմ/Հիմա մակբայների օգտագործումը միայն «ժամանակահատված» իմաստային բաղադրիչի դեպքում է հնարավոր դառնում, մյուս կողմից, այս մակբայների արտահայտած «ժամանակակետի» իմաստը բացառվում է անցյալ ժամանակային ձևերի առկայության դեպքում։

Այժմ-ի օգտագործման անհամեմատ բարձր կշռված միջին գնահատականը վկայում է այն մասին, որ անցյալ ժամանակների հետ ափելի շատ օգտագործվում է ԱՅԺՄ-ը, իսկ համեմատաբար փոքր դիսպրեսիան (0,3) ապացուցում է սահմանական եղանակով անցյալ ժամանակների — ԱՅԺՄ ուժեղ կապը։

Անհրաժեշտ է նշել, որ իրադեկիլների մի մասի կարծիքով ԱՅԺՄ-ը պատկանում է դրական, ՀԻՄԱ-ն՝ խոսակցական ոլորտներին։ Գիտափորձի ընթացքում ումանք էլ ելնելով մակբայների առաջնային իմաստից (ցուցում ներկայի նկատմամբ), որոշ խոսքաշարերում բացառում են վերոհիշյալ մակբայների օգտագործումը անցյալ ժամանակային ձևերի հետ 11, 22, 23, 24։ Վերջինս ստուգելու համար գիտափորձի մասնակիցներին առաջադրվեց մի նոր տեստ, որտեղ ստորոգյալը դրված էր անցյալ ժամանակով, իսկ ԱՅԺՄ-ն ՀԻՄԱ մակբայներից բացի կարելի էր կիրառել «այն ժամանակ», «հենց նոր», «թիչ առաջ» նախորդում ցույց տվող ժամանակի պարագաները։

25 Հայրը ...որոշեց ընկալանքը փոխել։

(ՀԻՄԱ՝ —, ԱՅԺՄ՝ 2, քիչ առաջ՝ —, հենց նոր՝ —, այն ժամանակ 9) 14,

26 ...հիասթափված ամեն ինչից, ապրում էր մի խուլ գյուղում։

ՀԻՄԱ՝ 1, այժմ՝ 2, քիչ առաջ՝ —, հենց նոր՝ —, այն ժամանակ՝ 3)

27 Քանոնը ... այստեղ էր, ո՞ւր կորավ։

(ՀԻՄԱ՝ —, այժմ՝ —, հենց նոր՝ 10, քիչ առաջ՝ 1, այն ժամանակ՝ —)

28 Աղջկան ... տեսել էին միջանցքում։

ՀԻՄԱ՝ 1, այժմ՝ —, հենց նոր՝ 2, քիչ առաջ՝ 7, այն ժամանակ՝ 1)։


Օրինակներից երևում է, որ իրադեկիլները անցյալ ժամանակաձևերի հետ գերադասել են անցյալն արտահայտող ժամանակի պարագաները (այն ժամանակ, հենց նոր, քիչ առաջ), որոնց իմաստի մեջ կա անմիջական ցուցում խոսելու պահին նախորդած ժամանակի նկատմամբ։ Խոսքաշարի մեջ նախորդության, անցյալի իմաստն արտահայտելու համար օգտագործվել է «այն ժամանակ» բառակապակցությունը, որը պարունակում է ցուցում հեռավոր անցյալի նկատմամբ (26)։ Իսկ մոտավորապես անցյալի իմաստն արտա-

14. Արարական թվերը ցույց են տալիս, թե իրադեկիլների կշռմից բանի անգամ է օգտագործվել այս կամ այն ժամանակային մակբայը, իսկ (—) նշանը ցույց է տալիս, որ բնավ չի օգտագործվել։

հայտնի ու համար օգտագործվել են «ԵՆԵՑ նոր», «Բիշ առաջ» բառակապակցությունները (27, 28):

Աշխատանքում ուսումնասիրվել են նաև ապառնի ժամանակով դրված ստորոգյալներով նախադասություններ, որտեղ գերազանցապես միայն ՀԻՄԱ-ի (այստեղ արդեն խոսքը գնում է ՀԻՄԱ₂-ի մասին՝ անմիջապես, շուտով, իսկույն) օգտագործումը վկայում է այն մասին, որ ապառնի ձևերի հետ ԱՅԺՄ մակրայի օգտագործումը գործնականում շատ շնչին է: (Ոչ մի հայ չի ասի՝ *Այժմ գալու եմ): ՀԻՄԱ/ԱՅԺՄ մակրայների ապառնի ժամանակի հետ օգտագործման միջին գնահատականներն են՝ ՀԻՄԱ=3,78, ԱՅԺՄ=0,22, իսկ նրանց դիսպերսիաները հետևյալն են՝ ՀԻՄԱ=0,27, ԱՅԺՄ=0,036:

ԱՅԺՄ/ՀԻՄԱ մակրայների օգտագործման վերոհիշյալ բոլոր դեպքերը ուսումնասիրելուց հետո կարելի է եզրակացնել, որ դրանք կողմնորոշված են ժամանակային առանցքի վրա և ցույց են տալիս հիմնականում ներկան, որը կարող է ներկայացվել որպես պահ կամ մի ամբողջ ժամանակահատված: Սակայն ՀԻՄԱ-ն ներկա պահը, ժամանակահատվածը ցույց տալուց բացի ընդգրկում է մասամբ նաև ապառնի ժամանակը, իսկ ԱՅԺՄ-ը ներկա ժամանակահատվածից բացի կարող է նշել նաև անցյալը: Հայտնի է, որ ժամանակը ունի միայն մեկ շարժում և գիտական գրականության մեջ ներկայացվում է առանցքի ձևով՝



որտեղ ԱՅԺՄ/ՀԻՄԱ մակրայներն ունեն իրենց օգտագործման ուրույն ոլորտները:

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում ուսումնասիրվող մակրայների կիրառությունը հրամայական, ըղձական, ենթադրական եղանակների հետ: Նշված բոլոր եղանակաժամանակային ձևերն արտահայտում են ժամանակային հաջորդականություն, ունեն ապառնիության իմաստ:

Հրամայական եղանակ

29 ...մի քիչ լուռ մնա, գլուխս ցավում է:

30 Իսկ ... վեր կաց ա դուրս գնա:

31 ...ցույց տուր ձեռքերդ, տեսնեմ լվացվե՞լ ես:

32 ...պատմիր, թե ինչպե՞ս այդ ամենը պատահեց:

Ըստ վիճակագրական տվյալների օրինակների այս խմբում ԱՅԺՄ-ի և ՀԻՄԱ-ի օգտագործման միջին գնահատականներն են՝ ԱՅԺՄ=1,364, ՀԻՄԱ=2,636, հետևյալ դիսպերսիաների դեպքում՝ ԱՅԺՄ=0,88, ՀԻՄԱ=0,88:

Ըղձական եղանակ

33 Եթե պատերազմ չլինեք, երկիրը ... այս վիճակում չէր լինի:

34 ...մի կարմիր խնձոր լինեք, ուտե՛ք:

35 Գոնե այս ամենը ... չձգձգվեք:

36 Եթե ... նա խնդրի էլ, ես չեմ համաձայնի:

Վիճակագրական միջին գնահատականներն են՝ $ԱՅԺՄ=1,545$, $ՀԻՄԱ=2,454$, միջին գնահատականի դիսպերսիաներն են՝ $ԱՅԺՄ=0,987$, $ՀԻՄԱ=0,987$:

Ենթադրական եղանակ

- 37 ...ինչ հաճությով մի դավաթ սուրճ կխմի:
38 Նա ... պրոֆեսոր կլինի, եթե լինեին բոլոր այս անապոգոթյունները:
39 Բոլոր նկարներն էլ թեղ ... կտամ, եթե չփլացնես:
40 ...կվեցնեմ ու կդնամ, արդեն ձանձրացա:

Միջին գնահատականներն են՝ $ԱՅԺՄ=0,636$, $ՀԻՄԱ=3,364$.
դիսպերսիան հետևյալն է՝ $ԱՅԺՄ=0,771$, $ՀԻՄԱ=0,771$:

Վիճակագրական միջամտության արդյունքներից երևում է, որ ՀԻՄԱ-ն գերակշռում է բոլոր օրինակներում: Սա կարելի է, թերևս, բացատրել այն հանգամանքով, որ նախադասության մեջ արտահայտվող հրամանը, ցանկությունը, պայմանն ու ենթադրությունը անմիջապես կապվում են խոսելու պահի հետ, որի հետ զուգորդվում է նաև անիրական, անիրագործելի ցանկությունը, եղելությունների պայմանականությունը¹⁵:

Ենթադրական եղանակի դեպքում ՀԻՄԱ-ն մոտ վեց անգամ ավելի հաճախ է օգտագործվում ԱՅԺՄ-ից: Սա վկայում է ենթադրական եղանակի ՀԻՄԱ ուժեղ կապի մասին: Այս միտքը հաստատելու համար գիտափորձի մասնակիցներին առաջարկվեցին չորս նախադասություններ, որոնցից յուրաքանչյուրում կար ՀԻՄԱ մակբայը, որը չորս խոսքաշարերին էլ հաղորդում էր խոսելու պահին հաջորդելու, ապառնիության իմաստ: Ստորոգյալները դրված էին փակագծերի մեջ՝ անորոշ դերբայի ձևով: Նշենք, որ իրազեկիչներն իրենք պետք է որոշեին օգտագործել կամ սահմանական եղանակի ապառնի, կամ ենթադրական եղանակի ներկա ժամանակաձևերը:

- 41 Հիմա Արամը (դալ):
(դալու է՝ 2, կդա՝ 9)
42 Հիմա ես (տեսնել), ուր է նա կորել:
(տեսնելու էմ՝ 2, կտեսնեմ՝ 9)
43 Հիմա նա (մտնել) ու բոլորս ողջան (նստել):
(մտնելու է՝ 2, նստելու ենք՝ 2, կմտնի՝ 9, կնստենք՝ 9)
44 Ես չիմտ (փնտրել) այդ շարաբաստիկ տեղեկանքը:
(փնտրելու էմ՝ 4, կփնտրեմ՝ 7)

Վերոհիշյալ օրինակներից կարելի է ենթադրել, որ նախադասության մեջ ՀԻՄԱ-ի շեղումը իրազեկիչները գերազանցապես նախընտրում են ենթադրական եղանակի ներկան: Այլ կերպ ասած, ենթադրական եղանակի դեպքում, երբ նախադասության խոսքաշարում պահանջվում է ԱՅԺՄ կամ ՀԻՄԱ ժամանակի մակբայների օգտագործումը, նախընտրությունը տրվում է վերջինին:

Ինչ վերաբերում է ՀԻՄԱ/ԱՅԺՄ-ի օգտագործմանը հարկադրական եղանակով դրված ստորոգյալի հետ, ըստ տեստի մասնակիցների բացատրության, դրանք տարբերակվում են միայն նախադասության ոճով: Միջին գնահատականներն են՝ $ԱՅԺՄ=1,727$, $ՀԻՄԱ=2,091$:

¹⁵ Ենթադրական եղանակի դեպքում «կդնամ» և «կղայի» ձևերն արտահայտում են հաղորդման պահին կամ անցյալի որևէ ժամանակակետի համար ենթադրվող, այլև որոշ պայմանով առնչվող եղելություններ, ընդ որում պայմանականությունն ավելի ուժեղ է անցյալի դեպքում: Գ. Բ. Ջահուկյան. Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը. Երևան, 1969, էջ. 259:

Հաղորդական եզրանակ

45 Պետք է... նրան օգնել:

46 ...պետք է ասել ամբողջ ճշմարտությունը:

47 ...է՛ն, պետք անհնձ:

48 Նրանք ... պետք է աշխատեն օր ու գիշեր:

Ինչպես արգեն նշմել է. ԱՅԺՄ-ը այստեղ դրսևում է որպես գրական ոճի, իսկ ՀԻՄԱ-ն՝ գուտ խոսակցական ոճի բառ (գուցե հենց այդ պատճառով էլ կապվում է խոսելու պահի հետ):

Վերոհիշյալ ըրոնր օրինակները և դրանց վերլուծությունը ցույց են տալիս, որ շատ խոսքաշարերում ՀԻՄԱ/ԱՅԺՄ մակրայների միմյանց փոխարինելը կարող է հանգեցնել որոշ իմաստային և ոճարանական տարրերությանների, որոնք չպետք է անտեսվեն խոսողի կողմից:

Սույն հոգվածը պարզաբանում է միայն ժամանակային գեյքսիսի միջուկը կազմող ՀԻՄԱ/ԱՅԺՄ մակրայների իմաստային առանձնահատկությունները, որոնք, անկասկած, տարածվում են նաև ժամանակային ցուցականության գաղաի մեջ ընդգրկված մյուս բառերի վրա, որոնց մանրամասն ուսումնասիրությունը գուրս է գալիս այս հոգվածի սահմաններից:

К ВОПРОСУ О КАТЕГОРИИ ДЕЙКСИСА В АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

Е. Л. ЕРЗИНКЯН, С. А. ЧАЛАБЯН

Резюме

В статье рассматривается одна из основных содержательных категорий языка — категория временного дейксиса. Детальному анализу подвергаются наречия *հիմա*, *այժմ*, образующие ядро указательного поля времени в армянском языке, выявляются их семантические и функциональные особенности, устанавливается конкретная референтная отнесенность, обусловленная лексико-грамматическим контекстом.